ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 508- Ա

24 նոյեմբերի 2020 թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾՈՎԻՆԱՐ ԳՅՈՒՂԻ ԱՐԾՐՈՒՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՄԻՀՐԱՆՈՒՇ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՍԻՄԱԿ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 13-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 69-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված 1-ին կետի պահանջներն ու Միհրանուշ Սահակյանի անձնական դիմումը

որոշում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովինար գյուղի Արծրուն Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Միհրանուշ Սահակյանին տրամադրել 2020 թվականի ամենամյա երկարացված արձակուրդի չօգտագործած մասը՝ 2020 թվականի նոյեմբերի 26-ից դեկտեմբերի 16-ը ներառյալ (15 աշխատանքային օր):

2. 2020 թվականի նոյեմբերի 26-ից դեկտեմբերի 16-ը ներառյալ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովինար գյուղի Արծրուն Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ

առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների և պարտականությունների իրականացումը վերապահել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովինար գյուղի Արծրուն Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մասնագիտական կրթական աջակցությունների գծով տնօրենի տեղակալ Սիմակ Մելքոնյանին /առանց տնօրենի պաշտոնի համար նախատեսված աշխատավարձի վճարման, համաձայնությամբ/:

3. Միհրանուշ Սահակյանին աշխատանքի մեջ համարել 2020 թվականի դեկտեմբերի 17-ից:

24.11.2020

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SANOSYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ
ք.Գավառ